Digitally signed by
BAGHDASARYAN SHUSHAN 5609980070
Date: 30.06.2025 18:41:36

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 27-06-2025 թ. որոշմամբ
ա«ԱՐԱՏՏԱ ԵՐԿԻՐ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԱՐԱՏՏԱ ԵՐԿԻՐ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՇԵՆԳԱՎԻԹ ՇԵՆԳԱՎԻԹ ԹԱՂԱՄԱՍ Արշակունյաց պող. 25/1
1.3 Պետական գրանցման համարը		222.160.1325677
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2023-06-22
1.5 ՀՎՀՀ-ն		02311067
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)99319806
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		arshakkar@gmail.com
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Արթուր Ալավերդյան		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
Գեորգես Տաբակյան		
Հայկ Սաֆարյան		
Վարդան Մարշալյան		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Արշակ Կարապետյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	1	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		

9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	2,369,944	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը		

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 15 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

GM CONSULT LLC

«ԱՐԱՏՏԱ ԵՐԿԻՐ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2024թ.-ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԻ

ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՍՊԸ
Աուդիտորական և խորհրդատվական ընկերություն
էլ.հասցե՝ consultgmllc@gmail.com, վեբ կայք՝ www.gmconsult.am, հեռ.՝ +37441451172

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Արատտա Երկիր» զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին և ղեկավարությանը

ԿԱՐԾԻՔ

Մեր կողմից իրականացվել է «Արատտա Երկիր» զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Հիմնադրամի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝այդ պահանջների համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար:

ԱՅԼ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Հիմնադրամի 2023թ.-ի ֆինանսական հաշվետվությունների աուդիտը իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որը 27.06.2024թ.-ին արտահայտել է չձևափոխված կարծիք:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը

սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

ԱՈՒԴԻՏՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար:
  Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՍՊԸ
Աուդիտորական և խորհրդատվական ընկերություն
էլ.հասցե՝ consultgmllc@gmail.com, վեբ կայք՝ www.gmconsult.am, հեռ.՝ +37441451172

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ՝ Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա՞ է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Հիմնադրամը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյո՞ք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. Երևան, 26.06.2025թ.

Ջի Էմ Քոնսալթ ՍՊԸ

Գլխավոր տնօրեն՝ Գոհար Մարգարյան

Որակավորված աուդիտոր՝ Անահիտ Միրզոյան

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Էջ

Հաշվետվություն ֆինանսական վիճակի մասին	2
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	3
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	4
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	5
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	6

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար դրամ

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծնթ.	2024թ.	2023թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4	3,103	5,473
Տրված կանխավճարներ փայերի համար	5	-	135,605
Իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	5	134,268	-
Ընդամենը ակտիվներ		**137,371**	**141,078**
Պարտավորություններ			
Պարտավորություններ	6	152	152
Ընդամենը պարտավորություններ		**152**	**152**
Զուտ ակտիվներ		**137,219**	**140,926**
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		**137,371**	**141,078**

Սույն ֆինանսական հաշվետվությունները ընդունվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 2025.-ի հունիսի 26-ին: 6-11 էջերի ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Արշակ Կարապետյան
Տնօրեն

Շուշան Բաղդասարյան
«Նեքսիա Արմենիա» ՓԲԸ-ի
լիազորված անձ

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար դրամ

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծնթ.	2024թ.	2023թ.
Նվիրաբերությունից եկամուտ	7	-	140,571
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող արժեթղթերի վերագնահատումից առաջացած զուտ օգուտ / (վնաս)	5	(1,337)	-
Արտարժութային գործարքներից ստացված օգուտ / (վնաս)	8	(154)	1,092
Ընդհանուր վարչական ծախսեր	9	(2,216)	(737)
Շահույթը / (վնասը) մինչև հարկումը		**(3,707)**	**140,926**
Շահութահարկի գծով ծախս / (փոխհատուցում)		-	-
Շահույթը / (վնասը) հարկումից հետո		**(3,707)**	**140,926**
Այլ համապարփակ եկամուտ		-	-
Համապարփակ ֆինանսական արդյունք		**(3,707)**	**140,926**

Արշակ Կարապետյան
Տնօրեն

Շուշան Բաղդասարյան
«Նեքսիա Արմենիա» ՓԲԸ-ի
լիազորված անձ

ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար դրամ

	Սեփական միջոցներ	Կուտակված արդյունք	Ընդամենը
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2022թ.	-	-	-
Համապարփակ ֆինանսական արդյունք	-	140,926	140,926
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2023թ.	-	**140,926**	**140,926**
Համապարփակ ֆինանսական արդյունք		(3,707)	(3,707)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2024թ.		**137,219**	**137,219**

Արշակ Կարապետյան
Տնօրեն

Շուշան Բաղդասարյան
«Նեքսիա Արմենիա» ՓԲԸ-ի
լիազորված անձ

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար դրամ

ԱՆՎԱՆՈՒՄԸ	2024թ.	2023թ.
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Արտարժույթի փոխարկումից ելքեր	(18)	(9)
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(450)	(165)
Վճարումներ պետական բյուջե	(174)	(29)
Ստացված ծառայությունների գծով վճարումներ	(1,592)	(390)
Ստացված նվիրաբերություն	-	140,571
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը	**(2,234)**	**139,978**
Վճարված շահութահարկ	-	-
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից	**(2,234)**	**139,978**
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Տրված կանխավճարներ փայերի համար	-	(134,791)
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		**(134,791)**
Զուտ դրամական հոսքեր	**(2,234)**	**5,187**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(136)	286
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	**(2,370)**	**5,473**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	**5,473**	**-**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	**3,103**	**5,473**

Արշակ Կարապետյան
Տնօրեն

Շուշան Բաղդասարյան
«Նեքսիա Արմենիա» ՓԲԸ-ի
լիազորված անձ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

31 դեկտեմբեր 2024թ. ավարտված տարվա համար

1. Ընդհանուր դրույթները

«Արատտա Երկիր» զարգացման հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) ստեղծվել է 2023թ. մայիսի 30-ին միակ հիմնադրի 30/05/2023-01 որոշմամբ և գործում է իր կանոնադրությանը, ՀՀ սահմանադրությանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, Հիմնադրամների մասին ՀՀ օրենքին, ՀՀ միջազգային պայմանագրերին և իրավական այլ ակտերին համապատասխան:

Հիմնադրամի գտնվելու վայրի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Արշակունյաց պող. 25/1շ.: Հիմնադրամը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 22.06.2023թ.-ին: Գրանցման համարն է՝ 222.160.132.160.1325677, ՀՎՀՀ-ն՝ 02311067:

Հիմնադրամի կառավարման մարմիններն են հոգաբարձուների խորհուրդը և կառավարիչը՝ տնօրենը: Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է: Խորհրդի քանակական կազմը բաղկացած է 3 անդամից: Խորհրդի անդամին նշանակում է Հիմնադիրը: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներն են.

- Գեորգես Տաբակյան
- Հայկ Սաֆարյան
- Վարդան Մարշալյան

Հիմնադրամի հիմնական նպատակներն են՝

- գիտահետազոտական, կրթական, մշակութային, ուսումնական, տեխնոլոգիական-արդյունաբերական, հայրենասիրական, տեխնոլոգիական, հոգևոր, սպորտային ծրագրերի իրականացումը և դրանց մասնակցությունը
- աջակցություն տարածաշրջանի զարգացմանը
- ազգային, պետական գաղափարախոսության հստակեցման և ազգային, պետական համակարգի կայացման նպատակով ազգային ընտրանու ձևավորմանը միտված հետազոտությունների և միջոցառումների իրականացումը
- ազգային և քրիստոնեական արժեքների ներդաշնակության վրա հիմնված հասարակության մոդելի կայացումը և դրա օժանդակությունը՝ Հայաստանը համամարդկային արժեքներ ստեղծող և քաղաքակրթական երկխոսության զարգացող հանգույց դարձնելու համար
- սոցիալական ապահովության և հանրային ծառայությունների որակյալ և հասանելի համակարգի ձևավորման խթանումը
- Հայաստանի Հանրապետությունում արդիական կրթական համակարգի ձևավորումը և դրա օժանդակությունը
- գիտահետազոտական, կրթական, մշակութային, պաշտպանական, ուսումնական, տեխնոլոգիական-արդյունաբերական, հայրենասիրական, տեխնոլոգիական, հոգևոր, սպորտային ծրագրերի իրականացման աջակցությունը
- պետության և հասարակության զարգացման առաջնային խնդիրների վերաբերյալ հետազոտությունների իրականացումը և (կամ) նման հետազոտությունների աջակցությունը

- բնական, տեխնիկական, հասարակական, հումանիտար գիտությունների բնագավառում գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների իրականացումը
- բարեգործական, գիտակրթական, մշակութային, հոգևոր, պաշտպանական, նորագույն տեխնոլոգիաների, տեխնոլոգիական արդյունաբերության, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում և այդ թեմաներով միջոցառումների, հետազոտությունների, կոնֆերանսների, ծրագրերի կազմակերպումը և (կամ) իրականացումը, ինչպես նաև նման միջոցառումների, կոնֆերանսների, ծրագրերի իրականացմանը աջակցությունը

Հիմնադրամը կարող է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել միայն այն դեպքերում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար նա ստեղծվել է և համապատասխանում է այդ նպատակներին:

Հաշվետու տարում Հիմնադրամը ունեցել է մեկ աշխատակից, 2023թ.-ի ընթացքում՝ նույնպես մեկ աշխատակից:

2. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Փոքր և միջին կազմակերպությունների Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿՖՀՄՍ) պահանջների համաձայն:

2.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հիմնադրամի գործառնական արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Հիմնադրամի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.4 Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում՝ որում վերանայվել են և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

2.5 Գործունեության անընդհատությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով գործունեության անընդհատության սկզբունքի վրա, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում սովորական գործունեության ընթացքում:

3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հիմնադրամի ֆինանսական հաշվառումը կազմակերպված է ըստ ստորև բերված հաշվապահական հաշվառման քաղաքականության:

3.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Հիմնադրամ, և ստացված եկամուտը հնարավոր է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Հիմնադրամից, և ծախսը հնարավոր է արժանահավատորեն չափել:

3.2 Փոխարժեքային տարբերությունների ճանաչում

Արտարժութային գործարքներից եկամուտները (ծախսերը) ներառում են արտարժույթով ակտիվների կամ պարտավորությունների վերագնահատումից եկամուտները (ծախսերը):

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժութային հոդվածների վերահաշվարկից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են որպես ծախս կամ եկամուտ:

3.3 Ֆինանսական գործիքներ

Հիմնադրամի ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը հաշվեկշռում ճանաչվում է այն ժամանակ, երբ այն դառնում է գործարքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական առուվաճառքի դեպքում դրանք ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ: Սովորական ճանապարհով ձեռք բերված ֆինանսական գործիքները, որոնք հետագայում պետք է հաշվառվեն իրական արժեքով, գործարքի օրվա և պայմանագրի օրվա միջև ընկած ժամանակահատվածում հաշվառվում են նույն եղանակով, որով հաշվառվում են ձեռք բերված գործիքները:

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները չափվում են իրական արժեքով՝ գումարած, ներդրումների դեպքում, գործարքին անմիջապես վերագրելի ծախսերը՝ բացառությամբ ֆինանսական արդյունքներում ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ներդրումները:

Հաշվեկշռային ամսաթվի դրությամբ Հիմնադրամը գնահատում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկման աստիճանը:

4. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ

(հազար դրամ)

Ընթացիկ հաշիվներ	2024թ.	2023թ.
ՀՀ բանկերում	3,103	5,473
Ընդամենը	**3,103**	**5,473**

5. ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՈՎ ՀԱՇՎԱՌՎՈՂ ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ՄԻՋՈՑՈՎ ՉԱՓՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

Հիմնադրամը 335,000 ԱՄՆ դոլար կանխավճարը տվել է «Արար Թեքնոլոջի» փակ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի փայերին բաժանորդագրման և դրանց ձեռքբերման նպատակով:

Հիմնադրամը 2024 թվականի հունվարի 25-ի դրությամբ ունի Արար Թեքնոլոջի փակ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի փայերում 135,605 հազար ՀՀ դրամ գումարի ներդրում և հանդիսանում է 4.83% փայատեր, իսկ 2024թ .-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 4.76%:

Հիմնադրամի ձեռք բերած ներդրումային ֆոնդի փայերը դասակարգվել են որպես իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ:

Հաշվետու տարում եղել է իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների 1,420 հազար դրամի վերաչափումից արժեքի աճ, որը վերագրվել է եկամուտներին, և արտարժույթի վերագնահատումից 2,757 դրամի նվազում:

31.12.2024թ.-ի դրությամբ Հիմնադրամի ՀՀ դրամով և արտարժութային մնացորդները՝

Հազար դրամ

Հոդվածի անվանումը	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլարի ՀՀ դրամով համարժեքը	Ընդամենը
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	327	2,776	**3,103**
Իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	-	134,267	**134,267**
Ընդամենը ակտիվներ	**327**	**137,043**	**137,370**
Պարտավորություններ			
Պարտավորություններ	152	-	152
Ընդամենը պարտավորություններ	**152**	**-**	**152**
Զուտ դիրք	**175**	**137,043**	**137,218**

31.12.2023թ.-ի դրությամբ Հիմնադրամի ՀՀ դրամով և արտարժութային մնացորդները՝

Հազար դրամ

Հոդվածի անվանումը	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլարի ՀՀ դրամով համարժեքը	Ընդամենը
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	211	5,262	5,473
Տրված կանխավճարներ փայերի համար	-	135,605	135,605
Ընդամենը ակտիվներ	**211**	**140,867**	**141,078**
Պարտավորություններ			
Պարտավորություններ	152	-	152
Ընդամենը պարտավորություններ	**152**	**-**	**152**
Զուտ դիրք	**59**	**140,867**	**140,926**

6. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հազար դրամ

Պարտավորություններ	2024թ.	2023թ.
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	14	14
Կրեդիտորական պարտքեր ստացված ծառայությունների, ընդունված աշխատանքների գծով	100	100
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	38	38
Մնացորդը ժամանակաշրջանի վերջում	**152**	**152**

7. ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԿԱՄՈՒՏ

2023թ.-ի նվիրաբերությունից եկամտի 140,571 հազար դրամը իրենից ներկայացնում է Հիմնադրամի միակ հիմնադիր Արթուր Ալավերդյանից ստացված նվիրաբերությունը կանոնադրական նպատակներով:

8. ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐԴՅՈՒՆՔ

Հազար դրամ

Արտարժութային գործառնություններից ստացված զուտ արդյունք	2024թ.	2023թ.
Արտարժույթի փոխարկումից եկամուտ	-	-
Արտարժույթի փոխարկումից ծախս	(18)	(9)
Արտարժույթի վերագնահատումից եկամուտ	-	1,101
Արտարժույթի վերագնահատումից ծախս	(136)	-
Ընդամենը	**(154)**	**1,092**

9. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ

Ընդհանուր վարչական ծախսեր	2024թ.	2023թ.
Աշխատավարձի գծով ծախսեր	624	246
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	1,560	475
Բանկային ծառայության ծախսեր	32	16
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	-	-
Ընդամենը	**2,216**	**737**

10. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեք

Հաշվետու ժամանակաշրջանի հունվար ամսին Հիմնադրամը ձեռք է բերել ներդրումային ֆոնդի փայեր, որոնք դասակարգել է որպես իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ:

Ֆինանսական գործիքների իրական արժեքը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ նրանց շուկայական գնանշման վրա, առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները: Եթե շուկայական գնանշումը հասանելի չէ, գործիքի իրական արժեքը չափվում է կիրառելով գնորոշման մոդելներ կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկան:

Երբ կիրառվում է զեղչված դրամական հոսքերի տեխնիկան, գնահատված ապագա դրամական հոսքերը հիմնված են ղեկավարության լավագույն գնահատականների հիման վրա և զեղչման դրույքը նմանատիպ պայմաններով գործիքի տոկոսադրույքն է հաշվետու ամսաթվի դրությամբ: Երբ գնորոշման մոդելներն են կիրառվում, ներմուծվող փոփոխականները հիմնված են հաշվետու ամսաթվի դրությամբ շուկայական համապատասխան փոփոխականների վրա:

11. Կանխատեսվող ապագա գործարքների հեջավորում

Հիմնադրամը հաշվետու ժամանակաշրջանում չունի այնպիսի ֆինանսական գործիք, որը հաշվառվում է որպես կանխատեսված ապագա գործարքների հետ կապված հեջ:

12. Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է, երբ վերանում է ակտիվի իրավունքի պահանջը: Հիմնադրամի հաշվեկշռում ապաճանաչված ֆինանսական ակտիվ չի հաշվառվում:

Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է, երբ նա մարվում է, համարվում է չեղյալ կամ դառնում է ժամկետանց: Հիմնադրամի հաշվեկշռում ապաճանաչված ֆինանսական պարտավորություն չի հաշվառվում:

13. Գրավադրված ակտիվներ

2024թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ չունի գրավադրված ակտիվներ:

14. Ընդունված գրավ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը չունի ընդունված գրավ:

15. Պարտավորությունները չկատարելը/խախտելը

Հիմնադրամը 2024թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում չունի հաշվառված այնպիսի պարտավորություններ, որոնց գծով պայմանագրային պարտավորությունները Հիմնադրամի կողմից խախտվել են: Հաշվետու ժամանակաշրջանում ներդրումային Հիմնադրամի կողմից որևէ պայմանագրային պարտավորություն չի խախտվել:

16. Կապակցված կողմերի հետ գործարքներ

Հիմնադրամի կապակցված կողմ են հանդիսանում հիմնադիրը, Խորհրդի անդամները, տնօրենը:

Հիմնադրամը հաշվետու տարվա ընթացքում միակ հիմնադրից ստացել է նվիրաբերություն 350,000 ԱՄՆ դոլարին համարժեք 140,570.5 հազար ՀՀ դրամի չափով: Հիմնադրամը հաշվետու տարվա ընթացքում տնօրենին վճարել է 450 հազար ՀՀ դրամ աշխատավարձ, իսկ 2023թ.-ի ընթացքում՝ 209 հազար ՀՀ դրամ:

Արշակ Կարապետյան
Տնօրեն

Շուշան Բաղդասարյան
«Նեքսիա Արմենիա» ՓԲԸ-ի
լիազորված անձ

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.06.2025 18:22